Bedeck
Construction

«19» հոկտեմբերի 2020թ.

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սուքիասյան

Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության և «Բիդեք» ՍՊԸ–ի միջև 30.06.2020թ. կնքված՝ N«ՓՀԲՏ-ԳՀԱՇՁԲ-20/18»՝ 1400 գծմ կոյուղագծի (Թաիրով գյուղի Վ. Մամիկոնյան փողոցից Փարաքար գյուղի Արարատյան փողոց) կառուցման աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում ինչպես հայտնել էինք նախորդ գրությամբ ևս՝ աշխատանքներն իրականացնելու ընթացքում ի հայտ է եկել տուֆի մոտ 4մ հզորությամբ համատարած շերտ, որը բերում է ժայռային գրունտի պայմանագրով նախատեսված ծավալների փոփոխության և պայմանագրով նախատեսված գումարի ավելացման: Առաջացած խնդիրները շինհրապարակում ուսումնասիրվեցին և արձանագրվեցին բոլոր ներկայացուցիչների՝ հեղինակային (*«Էկոարդտեխնախշին» ՍՊԸ*) և տեխնիկական (*«Նորայր և ընկերներ» ՍՊԸ*) հսկողությունների, «Բիդեք» ՍՊԸ-ի՝(*Կապալառու*) և Ձեր՝(*Պատվիրատու*), ինչպես նաև երկրաբանի ներկայացուցիչների կողմից:

Նշենք, որ արձանագրված հանգամանքը դանդաղեցնում է աշխատանքների ընթացքը և խոչընդոտ է հանդիսանում պայմանագրով սահմանված ժամանակահատվածի համար:

Կից Ձեզ ենք ներկայացնում երկրաբանի եզրակացությունը և հեղինակային ու տեխնիկական հսկողությունների կողմից հաստատված արձանագրությունը:

Խնդրում ենք Ձեզ տալ համապատասխան լուծում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ԲԻԴԵՔ» ՍՊԸ –Ի ՏՆՕՐԵՆ ԳԱՌՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«ԲԻԴԵՔ» "БИДЕК" "BEDECK" 00450801

+(374)11 575522
87a Sasuntsi Davit str. Yerevan,
Armenia

info@bedeck.am
www.bedeck.am